# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 օգոստոսի 2025 թվականի N 1184-Ա

«ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48[1]-րդ հոդվածի 6-րդ մասով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ և 21-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 46.2-րդ կետի «գ» ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հավանություն տալ «Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ձրվեժ համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող «Ձրվեժ» անտառպարկի 23.3 հա հողամասում կառուցապատման նպատակով ներկայացված ներդրումային ծրագրին (այսուհետ՝ ներդրումային ծրագիր)՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ձրվեժ համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող «Ձրվեժ» անտառպարկի 23.3 հա հողամասը՝ համաձայն N 2 հավելվածի, հանրային-մշակութային և սպորտային հանգստի գոտի կազմակերպելու նպատակով՝ առանց մրցույթի, կառուցապատման իրավունքով՝ 50 տարի ժամկետով, տրամադրել կազմակերպությանը՝ 20,900,000,000 (քսան միլիարդ ինը հարյուր միլիոն) դրամ արժողությամբ ներդրումային ծրագրին համապատասխան ներդրումներ իրականացնելու նպատակով:

3. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) մեկամսյա ժամկետում, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի համաձայն, սույն որոշման 1-ին կետով հավանության արժանացած ներդրումային ծրագրի վերաբերյալ տալ փորձագիտական եզրակացություն.

2) «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության աջակցությամբ իրականացնել 23.3 հա մակերեսով հողամասի չափագրման աշխատանքներ՝ կազմելով հայցվող 23.3 հա հողամասի սահմանների շրջադարձային կետերը WGS 1984 (ArmRef02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով.

3) սույն կետի 2-րդ ենթակետի աշխատանքներն ավարտելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության և կազմակերպության միջև պայմանագրի կնքումը՝ այն համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ՝ վերջինիս մեջ նախատեսելով, որ՝

ա. կազմակերպությունը պարտավոր է պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 13 տարվա ընթացքում կատարել 20,900,000,000 (քսան միլիարդ ինը հարյուր

միլիոն) դրամի ներդրումներ՝ համաձայն N 1 հավելվածով հավանության արժանացած ներդրումային ծրագրի,

բ. կազմակերպությունը պարտավոր է իր կողմից ներկայացված ներդրումային ծրագրով նախատեսված աշխատանքների կատարումը հավաստող համապատասխան փաստաթղթերը ներկայացնել «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ յուրաքանչյուր հաշվետու տարվա ավարտից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում: Վերջինիս կողմից ուսումնասիրվելուց հետո դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության դիտարկմանը,

գ. սույն ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված ներդրումային պարտավորությունների կատարման նկատմամբ կիրառելի են Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի «Պետական գույքի կառավարման ոլորտում Հայաստանի Հանրապետության անունից կնքված գործարքներով ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու և պետական գույքի գրավադրման պայմանները սահմանելու մասին» N 2102-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 13-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի, 14-րդ և 15-րդ կետերի պահանջները,

դ. ներդրումային ծրագրի շրջանակներում կատարված բաժանելի և անբաժանելի բարելավումները վերադարձման, իսկ դրանց արժեքները հատուցման ենթակա չեն,

ե. պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման նախատեսված ծախսերը ենթակա են իրականացման կազմակերպության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

22.08.2025

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ